

2563

244

L-40

1851

2010

ᐱᐅ ᐱᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ

ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ



ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ ᐅᐅ

ᐅ ᐅᐅᐅᐅᐅ ᐅᐅᐅᐅᐅᐅᐅᐅ ᐅᐅᐅᐅᐅᐅᐅᐅ

1851

244
 5-40






244

L-40

ԼԵՌՆԵՐՈՒՆ ԳՐԵՅԻ

ԳԻՒՂԸ



Man-050

ԶՄԻՒՌՆԻ

Ի ՏՄԱՐԱՆԻ ԿՈՒՆԿԵՐԱՆՍ ԿՐԻՏՖԻՐԻ

1851

to - 2000

ԼԵՌՆԵՐՈՒՆ ՎՐԵՅԻ

Գ Ի Ի Գ Լ

Եւերիկացի վաճառական մը՝ որ Փարիզի մէջ ե-
 րևելի վաճառականաց մէկն էր, առիթ ունեցաւ ան-
 դամ մը Լոյիլի և Փիւլ տը Տօմի կոմսութեանցը
 լեռնային տեղուանքը գտնուած ձեռակերտաց գոր-
 ծարանները աչքէ անցընելու: Ու երբոր նորէն Լեռն
 կը գառնար, անանկ մէկ տեղէ մը կ'անցնէր որ բը-
 նութեան բերքերովը ճոխացած էր, և վերահաս ա-
 ռատարգին գարնան մը բոլոր գեղեցիկութիւնը կը
 փայլէր: Սօտ տեղուանքը զանազան զուարճալի ա-
 ռարկաներ կ'երևնար, չէ՛ թէ միայն լեռներուն տար-
 օրինակ ձևերուն համար, պզտիկ և իրարու հա-
 ղորդուող վտակներուն խտորնակի ընթացքին հա-
 մար, և մարգագետիններուն, ցորենին, այգիներուն
 և կանանչեղէններուն զանազան գոյներուն համար,
 հապա բնութեանը և մարդկային արուեստին, և
 գեղջիկան ու առևտրական ճարտարութեանը միա-
 բանած ըլլալուն համար: Յարգանոցներուն և փա-
 բաններուն մէջ՝ գործատուններ ու փուռեր ցցուած
 կ'երևնային: Դարբնոցներուն ու ձուլարաններուն
 մօտ գեղջուկները կը փորէին, և արօրները կը հեր-
 կէին: Ե՛ծխահանքի պարապ հօրերուն սե ու գար-
 շահոտ բերաններուն քովը տեղ տեղ կը տեսնուէր
 կանանչագեղ զառիփայրներ, և գեղեցիկ անտառա-
 ձև ծառերու ժողովներ: Հոս տեղ վտակին խոխո-
 քելուն հեզիկ ձայնը՝ ոստայնանկաց գործարանին
 բարձր շառաչելնին հետ կը լսուէր: Երբեմն աս վա-
 ճառականը և իր բարեկամը կանկ կ'առնէին աս ա-
 մէն զուարճալի և հաճոյական տեսարաններուն քո-
 վերը, և քիչ մըն ալ առաջ երթարով, անբեր, այ-

խօսակցող կնիկը տեսաւ, որուն աղջիկները ու թոռները բոլորտիքը նստած ժրջանութեամբ զբաղելը էին հինգ գործարաններով վերջաւորներ ու ժապաւէններ գործելու որ իրենց մարաքաղաքը Փարիզ, ու երկրիս խիստ հեռաւոր տեղուանքը խրկեն ծախուելու համար : Ես բարի որբւարիին տարիքը վաթսունին ու եօթանասունին մէջտեղն էր . անոր հագուստը պարզ ու մաքուր էր . և անոր դատիկոնին ամէն կարգադրութիւններէն յայտնի կ'երևնար աշխատասիրութիւն, սակաւապէտութիւն, և բարեպաշտութիւն : «Ո՛հ Տէր» , կանչեց կնիկը, վաճառականին ներս մտած ատենը, «ինչ երջանիկ մէկ մըն եմ ես, որ ասանկ այցելու մը կ'ընդունիմ» : «Տիկին» , ըսաւ վաճառականը, «ես արժանի չեմ աս յարկին տակը մտնելու» : «Ետ ի՛նչ կ'ըսես, Տէր իմ» , կանչեց որբւարին, «դուն մեզի Յիսուս Քրիստոսին պէս խօսեցար, և —» : «Եյո՛, Տիկին, բայց ես ողորմելի ապականեալ մեղաւոր մըն եմ, և միայն կը հաւատամ որ խաչին միջոցով պիտի փրկուիմ : Երէկ այս ինչ տեղն էի, ուր որ հանդիսաւոր արարողութիւններով խաչ մը կը կանդնէին . արդեօք դուք ալ հո՞ն էիք» : «Ո՛չ, Տէր, քանզի անօգուտ քան մըն է փողոցներուն մէջ խաչեր կանդնելը, թէ որ խաչը մեր սրտերուն մէջ չենք կրեր, և աշխարհի խաչը ելած չենք : Բայց, տէր իմ, եթէ չէք դրժուարիր, կ'ուզէի հարցընել ձեզի՛ թէ ինչպէս կը կոչուէիք» : Վաճառականը աս գաղղիարէն ոճը ընդհանուր մտօք առնելով, պատասխանեց . «Տիկին իմ անունս այս ինչ է» : «Շնորհակալ եմ, տէր իմ, պիտի չմոռնամ . բայց իմ հարցուցածս աս չէր . կ'ուզէի գիտնալ թէ արդեօք Բրոթէսդանդ ես՝ թէ Պապական, հովիւ մը՝ թէ քահանայ» : «Տիկին՝ ատըսածներէդ մէջն ալ ըլլալու չեմ արժանացիր . ևս վաճառական եմ . իմ փախաքս աս է որ բարի քրիստոնեայ մը ըլլամ . և ուրիշ տիտղոս մը չունենամ :

բայց միայն Քրիստոսի աշակերտ կոչուիմ" : «Տէր
իմ՝ մենք ալ առ բանին կը փափագինք» , կանչեց
բարի որբւարին , «բայց դուն որ այդպէս համար-
ձակախօս մէկ մըն ես , Վաթովիկ ես , թէ Յրոթէս-
դանդ" : «Վաթովիկ եմ" , պատասխանեց վաճառա-
կանը : Տիկինը շիտթուած՝ ըսաւ որ՝ «Ատ ըրած
խօսակցութիւններդ քիչ անգամ լսուած է Վաթո-
վիկներէն" : «Աս Վաթովիկ եմ" , կրկնեց վաճառա-
կանը , «բայց չէ՛ թէ Հոովճական Վաթովիկ եկե-
ղեցւոյն անդամմը : Աս կը սիրեմ ան ամէնը՝ որոնք
անկեղծութեամբ կը սիրեն մեր Տէր Յիսուսը , ու
չեմ փնտռեր՝ թէ որ փարախին մէջ կ'արածուին .
բաւական է որ զիրենք առաջնորդողը և զիրենք սը-
նուցանողը՝ բարի Հովիւր և հոգիներուն Տեսուչը
ըլլայ" : «Ո՛հ" , ըսաւ որբւարին սրտի զգացումով
իր բոլորտիքը նայելով , «աս ի՞նչ շնորհք պարգե-
ւեց մեզի Տէրը՝ որ մեզի նման Քրիստոնեայ մը գը-
տանք . մենք կը փափագինք բոլոր մարդոց հետ սի-
րով վարուելու , բայց համարձակ խօսելով , Տէր իմ ,
մենք պատարագ տեսնելու չենք երթար , ո՛չ ալ խոս-
տովանութեան , ինչու որ մեր հինցած ու մաշուած
կտակարանէն սորված չենք թէ պարտինք երթալ մեզ-
քերնիս խոստովանել մեզի պէս մեղաւորներուն , և
թէ երկրպագութիւն ընել նշխարին , և ապաշխա-
րանք քաշել մեր հոգիներուն փրկութեանը համար .
հապա մենք կը հաւատանք որ թէ՛ այրի սը մէջ՝ թէ՛
սենեակի մէջ և թէ՛ լեռան մը վրայ կրնանք Աստու-
ծոյ հաճելի ըլլալու կերպով իրեն երկրպագութիւն ը-
նել" : «Յիրաւի" , ըսաւ վաճառականը , «ես շատ
կը զարմանամ որ ասանկ տեղ մը ասանկ մարդիկ գըտ-
նուին . կ'աղաչեմ՝ ըսէք ինձի , աս տեղուանքը որչափ
մարդիկ կը գտնուին ձեր զգացումը ունեցող" : «Հոս
և լեռներուն վրայ ցրուած իրեք հարիւրէն մինչև չորս
հարիւր հոգիի չափ կ'եղէ , տէր իմ : Աիրակի իրի-
կունները և պատեհութիւն գտած ժամանակնիս կը

Ժողովուհնք Տէր Յիսուսին աղօթք ընկուլ , կտակարան կարգալու , և մեր հոգւոց փրկութեանը վրայով խօսակցելու համար : Ստէպ ստէպ եկեղեցականներէն հալածանք կրելնուս պատճառաւը՝ չննք կրնար ուզածնուս պէս յայտնի կատարել մեր կրօնական պաշտօնը : Մեզի կրօնամոլ և յիմար կը կոչեն , բայց աս անարգանաց յօժարութեամբ կը տանիմք , և կը յուսամք որ ասիէ աւելի մեծին ալ , միայն Անոր սիրոյն համար՝ որ մեզի համար այնչափ չարչարուեցաւ” :

Արբոր աս խօսակցութիւնը կ'ընէին , սենակաները մարդիկ լիցուեցան . դրացիները աս ազնիւ հիւրընկալին խնդրանօքը ներս եկեր էին , և անոնք որ կրօնային իրենց ձեռքի գործքերը թող տալ՝ մեծ փափազով եկան Աստուծոյ թագաւորութեանը վրայով խօսքեր լսելու : Աւաճառականը ուզեց անոնց Աոր Կտակարանը տեսնել , ու զանիկայ բերին անոր : Տիտղոսին թերթը չկար , թուղթերը գրեթէ մաշուեր կտոր կտոր եղեր էին ոստայնանկաց և երկրագործաց մատներէն , անանկ որ վաճառականը չէր կրնար որոշել թէ ինչ տպագրութիւն էր : Անկան մէկը՝ որ շնորհալի երևոյթ մը ունէր , մօտեցաւ վաճառականին , ու ըսաւ . «Շատ տարիէ ՚ի վեր է որ ամէն տեղ կը փնտռէի մէկ Աոր Կտակարան մը , ու աս մեր բոլորաթի գեղերուն մէջ թէ որ մէկ հատ մը՝ գտնէի , ինչ գին որ ուզելու ըլլային , պիտի տայի , բայց չգտայ : Երդեօք կարելի էր , տէր իմ , որ ինծի համար մէկ հատ մը առնէիք , ևս ուրախ սրտով քու ուզածիդ չափ ստակ պիտի վճարէի” : «Տիկին” , ըսաւ վաճառականը , «չէ թէ միայն մէկ հատ մը՝ հապա քսանուչորս ժամու միջոցին՝ վեց օրինակ պիտի խրկեմ՝ ձեզի” : «Աարելի՞ բան է ատ ըսածդ” , կը կանչէին ապշած գեղացիները . «արդեօք ատ քարի լուրին հաւատա՞նք , տէր իմ , ատ քու խոստմունքիդ վրայ յոյսերնիս դնե՞նք : Ետ ի՞նչ մեծ ու ի՞նչ երևելի բաժնագործութիւն մըն է , ուրևմէ թէ որ

կը հաճիր՝ հիմա անոնց դինը վճարենք" : «Թէ որ Լստուած զիս ողջ պահէ" ըսաւ վաճառականը , «ապահո՛ւ եղիք որ Լեւտարանները անշուշտ պիտի ընդունիք , սակայն կ'աղաչեմ ձեզի որ շնորհք ընելով զանոնք ընդունիք 'ի նշան իմ՝ քրիստոնէական ակնածութեանս , և 'ի յիշատակ իմ երախտագիտութեանս , որ ասանկ տեղի մը մէջ Քրիստոսի հետևողներուն քաղցր ընկերութիւնը վայելելու արժանացայ , որն որ ընաւ չէր յուսացուեր" :

Եսկէ ետև խօսակցութիւնը դարձաւ Սուրբ Գրոց պատուականութեանը վրայ , և ան մարդոցը մեղանչականութեանը վրայ , որոնք զանիկայ կ'արգիլեն կորստեան և յուսահատութեան մէջ գտնուող մեղաւորներէն : Քիչ մը ատենէն ետքը՝ հիւրընկալ կիներ հարցուց թէ՛ «Տէր իմ , արդեօք աշխարհիս վրայ պատահած բաներէն ի՞նչ նոր լուր կայ . քանզի մենք ամէն տեսակ հաղորդակցութենէ զուրկ ենք . միայն թէ աս բանս տպաւորուած է մեր մտքին մէջ՝ թէ Լստուած երկրիս վրայ մեծ դործ մը սկսած է , և թէ օր ըստ օրէ զարմանալի դիպուածներ կը պատահին" : «Մեծ դիպուածներ պատահեցան" , ըսաւ վաճառականը , «և ամէն օր Լեւտարանին տարածուելուն , և Սուրբ Գրոց խօսքերը կատարուելուն վրայով նոր լուրեր կը հասնին աշխարհիս ամէն կողմերէն" : Եսկէ ետև իր վրայ զմայլած ունկնդիրներուն ստորագրեց Լստուածաշունչին տարածուելէն առաջ եկած բարուց փոփոխութիւնը , օտար երկիրներ խրկուած քարոզչաց աշխատութիւնը , և ան տեղուակքը դպրատուններ հաստատուելը . բայց աս ամէնը անանկ կերպով մը կը ստորագրէր որ կարող ըլլան իմանալ , քանզի աշխարհիս հոգևոր վիճակին վրայով քիչ տեղեկութիւն ունէին : Աւ երբոր վերջացուց իր խօսքը , ամէնը միաբանութեամբ աս աղօթքը ըրին . «Քու թագաւորութիւնդ գայ , քու կամբդ ըլլայ երկրիս վրայ , ինչպէս որ երկինքի մէջ" :

Եւ թէպէտ վաճառականը խիստ կ'արտորար իր ճամբան շարունակելու, այսու ամենայնիւ իրեք ժամ խօսակցութիւններով անցուց, և յորդորեց զանոնք որ միայն Սուրբ Գրոց մէջ գտնուած բաները ընդունին՝ և ՚ի գործ դնեն, և իրենց բոլոր սլտովք Տէրոջը յարին :

Ես տարօրինակ այցելութիւնը խիստ սրտաշարժ կերպով մը վերջացաւ . լեռնաբնակներուն աչքերէն ուրախութեան, երախտագիտութեան և տրամութեան արտասուքներու վտակներ կը հոսէին . և ճանապարհորդը ան ամէն տեսարաններէն աւելի՝ ուսկից որ անցերէ, աս տեղս Եստուծոյ շնորհքը տեսնելուն վրայ խորին զգացում մը ունենալով՝ ուրախութեամբ ճամբայ ելաւ, և բարի որբեարիին ցուցուցած կողմէն գնաց, ու այսինչ քաղաքը հասաւ : Են տեղի երեւելի մարդիկներէն ու իշխանաւորներէն ոմանք՝ իր թղթակիցներն էին . և որովհետեւ իր տեսած բաները իր մտացը մէջ խորունկ տպաւորուած էին . իբրև հետաքրքիր ճանապարհորդ մը հարցուց անոնց ան լեռներուն վրայի գեղին անունը՝ ուսկից որ ինքը անցեր էր, և հոն բնակիողներուն զբաղմունքը ինչ ըլլալը, և անոնց ինչ բնաւորութեան տէր ըլլալը : « Են մարդիկը », ըսաւ քաղաքապետը, « մետաղներու մէջ կը գործեն, և եղներ կ'արածեն, և արտերու մէջ կ'աշխատին . իսկ անոնց կնիկները և աղջիկները ոստայնանկութիւն կ'ընեն : Օտրմանալի ժողովուրդ մըն են անոնք, նոր աղանդ, բայց շատ պարկեշտ և աշխատասէր ժողովուրդ մըն են ան գեղին մէջ, բուն առաքինութիւնը իրենք են : Մենք ամենեւին պէտք չունինք մեր մետաքսը կշռելու, թէ տուած ատեննիս և թէ առած ատեննիս, քանզի աղէկ գիտնեք որ մեր ստակի մը բանը պիտի չկորսուի և աշխարհիս վրայ ասոնց պէս մարդասէր ժողովուրդ մը չկայ . երբոր մէկը թշուառ վիճակի մէջ տեսնեն, իրենց կռնակէն լաթերնին կը հանեն անոր կու տան :

յիրաւի անոնց մէջ թշուառութիւններ չըլլար . քանզի թէ և աղքատ են , բայց աշխատասէր , ժուժկալ , և ողորմած են , ու միշտ իրարու կ'օգնեն . իսկ երբոր անոնց կրօնքին դպչելու բան մը խօսիս , ան ատենը պիտի տեսնես որ դիւրեթէ յիմար մարդիկ են : Ենոնք բնաւ պատարազ տեսնելու կամ խոստովանելու չեն երթար . յիրաւի անոնք քրիստոնեայ չեն , թէ և աշխարհիս մէջ խիստ բարի ժողովուրդ մըն են : Եւ ծիծաղելի բան մալ կայ . նայէ՛ մէյմը սա խեղճ ժողովուրդին՝ որ բոլոր շաբաթը գործելու ետէէ են , և Աիրակի օրերն ալ փոխանակ հանգստութիւն մը վայելելու , և տօնախմբութեան կամ կաքաւու հանդէսները երթալով զուարճանալու , իրարու տուն կ'երթան մէկ գիրք մը կարդալու և երբեմն ալ գուրս լեռան վրայ աղօթք ընելու ու հողևոր երգեր երգելու համար : Ենոնք խիստ ճարտարարուեստ ժողովուրդ մըն են , բայց իրենց Աիրակիները ու տօնի օրերը յիմարութեամբ պարապ կ'անցընեն" : Իր ստացած նոր բարեկամներուն ասչափ պատուական վկայութիւնը հաստատուեցաւ զանազան մարդոց խօսքերովն ալ . և ինչ որ անոնք զրուցած չէին իրենց համար , ուրիշներէն իմացաւ թէ՛ բաց ՚ի իրենց պարկեշտութենէն ու բարեպաշտութենէն՝ այնչափ նախանձաւոր են , որ զանազան գեղերէ կու գան , ու լեռներուն վրայ մէկտեղ կը ժողովուին ցուրտ ու գէշ եղանակներուն ատենը , գիշերուան ժամը ու թին կամ իննին , որպէս զի իրենց թշնամիներուն արգելքներէն ազատըլալով հողևոր երգեր երգեն ու աղօթք ընեն :

Ես խօսքերը՝ վաճառականին միտքը դրած բաները չխափանեցին , հապա Ղիոն հասնելուն պէս՝ վեց օրինակ՝ Մոր Ատակարան , և քանի մըն ալ կրօնական տետրակներ առաւ ու խրկեց : Ես վաճառականը՝ իր փարիզ հասնելէն քիչ մը ետքը՝ Ղիոնի մէջ բնակող իր թղթակիցներէն մէկուն միջոցովը նամակ մը ընդունեց ան բարի որբեարիէն , որուն հետ խօսակ-

ցութիւն ըրեր էր : Ես նամակին բառ առ բառ թարգմանութիւնը հոս կը դնենք , որուն մէջի պարկեշտութիւնը , ազնուութիւնը և բարեպաշտութիւնը , չէ՛ թէ միայն կը յայտնեն ճշմարիտ կրօնքին՝ գրողին վրայ ըրած տպաւորութիւնը , հասա նաև կարգացողին կ'ապացուցանեն ա՛յ որ աս լեռնաբնակներուն վրայով չափազանցութեամբ խօսուած չէ՛ աս պատմութեանս մէջ :

«Տէր իմ ,

«Ինձ պատիւ կը համարիմ հրամանացդ գրութեամբ ծանուցանել իմ խոնարհ ակնածութիւնս , և նոյն ժամանակը իմացընել թէ վեց հաս Կոր Աբտակարանը ձեռքերնիս հասաւ , որոնք բոլ բարեացակամ առատաստութեամբդ խրկեր էիր : Իմ ընտանիքս ու ես՝ և իմ գրացիներս չենք գիտեր թէ ի՛նչպէս ճշգրութեամբ յայտնենք մեր անկեղծ երախտագիտութիւնը , քանզի աշխարհիս վրայ Սուրբ Գրքէն ուրիշ անգին բան մը չկայ , որ մեր հոգիներուն ամենէն ընտիր կերակուրն է , և որ մեզ գէպ ՚ի երկնային Երուսաղէմ կ'առաջնորդէ :

«Ար հաւատանք և հաստատ գիտենք որ միայն մեր Տէրօջ Յիսուս Քրիստոսի Հոգւոյն ներշնչութեամբ աս փափաքը ձեր ներսի գին ունեցաք , այսինքն Արքազան Քիբբը շնորհելանանկ մարդոց՝ որոնք գիտեն զանհկայ սրբութեամբ գործածելը , ուստի կը յուսանք և կը հաւատանք որ մեր երկնաւոր Փրկիչը ինքը ձեզի վարձահատոյց պիտի ըլլայ , և որ պիտի տայ ձեզի , ինչպէս որ մեր ամեննուս ալ ան շնորհքը , որով իմանանք՝ ու իր երկրորդ անգամի գալտեանը երկինքի մէջ բաժին մը ունենալու հուսէ ըլլանք , քանզի աս խաւարային և վշտալի ժամանակներուս մէջ՝ որ հիմա կ'ապրինք , պէտք է որ մեր մի միայն տեղական փափաքը աս ըլլայ :

«Ե՛հա աս նպատակաւս կ'ազաչիմ ձեր Եզնուութեամբ՝ որ բարեհաճիք վեց հաս Սուրբ Գրքս

ալ խրկել իմ բարեկամացս համար, որոնք չէ թէ միայն տիպին գեղեցկութեանը հաւնած են, այլ մտնաւանդ տպագրութեան հաւատարմութեանը. քանզի Ս. Ը Սէթը տը Սասիին անունը վրան ըլլալէն ետեւ, անտարակոյս ան տպագրութիւնը ճշդութեամբ համաձայն է սրբազան բնագրին: Տէր իմ, աս վեց օրինակ՝ Սոր Ատակարանները ինձի ապսպրողները՝ չուզելով որ ձեր առատասարտութեանը ծանրաբեռնութիւն մը եղած ըլլայ, աս ալ ինձի ապսպրեցին որ ձեզի գրեմ. այսինքն թէ որ անոնց բաղձանքը կատարելու ըլլաք, ինչպէս որ ձեր ճշմարիտ քրիստոնէական բարեսիրութենէն կը յուսացուի, և գրքերուն վրայ գիներնին նշանակէք, իրենց հաճութիւն մը և պարտք մը սեպելով ան դումարը ձեզի պիտի հատուցանեն, ու գրքերը հասնելուն պէս ըստակն ալ պիտի խրկեմ, ու շատ շնորհք ըրած պիտի ըլլաք թէ որ խրկած տետրակներէդ վեց օրինակ ալ խրկէք:

«Աղաչեմ, Տէր իմ, ներեցէք ըրած համարձակութեանս, և ճանչցէք՝ քանի որ ողջ եմ, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հոգւովը»

«Ձեր ամենախոնարհ աղախինը
«Արքեարի —»

Վաճառականը աս նամակը ընդունելուն՝ անոր ներսի դին նորէն արծարծեցաւ աս երջանիկ գեղջուկներուն վրայ ունեցած ան իր առջի ազգու ըզզացումը: Հատ անգամ միտքը բերած էր ան քրիստոնէական մարդասիրութիւնը՝ որով զինքը ընդունել էին, և շատ անգամ եռանդազին սրտիւ աղօթք ըրած էր շնորհաց Ատուծոյն՝ որպէս զի «Ան բարեգործը որ անոնց մէջ ինքը սկսեր էր», բարեհաճի առաջ տանիլ մինչև «Յիսուս Քրիստոսին օրը»:

Վաճառականը աս պատուական կնկան աղաչանքին նայելով՝ վեց օրինակ՝ Սոր Ատակարան խրկելուն տեղը քսան օրինակ խրկեց անոր, պատուիրելով

որ զանոնք կարողութիւն ունեցողներուն ստակով ծախէ . իսկ անոնք որ կը փափագին Սուրբ Գիրք ունենալ , և ծախու առնելու բաւականութիւն չունին , անանկներուն «Առանց ստակի և ձրի» տայ ինչպէս որ ինքը յարմար կը դատէ : Ես գրքերուն հետ մէկ Աստուածաշունչ* մըն ալ ընծայեց որբեարիին՝ ՚ի նշան իր քրիստոնէական սիրոյն , տասուերկու օրինակ ալ անոր խնդրած տետրակէն , և ուրիշ զանազան կրօնական գրքեր : Ես անակնկալ շնորհքը ընդունելուն՝ ասանկ կը պատասխանէ 1821 , Յուլիս 17ին գրած նամակին միջոցովը :

«Յարգոյապատիւ բարեկամ և եղբայր՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով —

Երբոր ընդունեցի՝ ձեր մարդասիրական շնորհքը՝ որն որ բարեհաճեր էիք մեզի խրկելու , անպատմելի բերկրութիւն մը զգացի սրտիս մէջ : Չէի կրնար կըշտանալ անոր մէջ պարունակուած խօսքերը կրկին և կրկին կարդալէն , որոնք երկնաւոր Փրկչին թագաւորութեանը յառաջանալուն վրայով քուկին և քու բարեկամներուդ փափագանացը նոր օրինակ մըն էին : Չեմ գիտեր թէ ինչ խօսքով յայտնեմ ան երջանկութիւնը որն որ զգացի իմ ներսի դիս՝ ձեր խրկած Աստուածաշունչը կարդալով , որուն համար խնդրեք էիք որ ընդունիմ ՚ի նշան ձեր քրիստոնէական սիրոյն : Ես ձեր սիրոյ նշանը ինծի շատ ընդունելի և օգտակար եղաւ . քանզի իմ վերջին նամակովս միտք ունէի ազաչել ձեզ , որ քանի մը շին Ատակարան խրկէք . բայց սա իմ գիտաւորութիւնս ՚ի գործ դընելու համար ձակեցայ , որ չըլլայ թէ ձեր քրիստոնէական մարդասիրութեանը և առատաձեռնութեանը ծանրաբեռնութիւն մը ըլլայ : շին և՛ Սոր Ատակարանը մէկ Ատակարան պիտի սեպենք , թէ որ անոնց

*Աստուածաշունչը բաւելով բոլոր Սուրբ Գիրքերը այսինքն շին և՛ Սոր Ատակարանները հիշելու կազմաւորելիք :

Պորը հասկընանք և անոնց մէջն կապակցութիւնը
 սղէկ իմանանք : Քանզի 'Սր Կտակարանը' չինին
 բանապին է 'նոյնպէս ալ չինը 'Սորին : չին Կտա-
 կարանին մէջ անհամար տեղուանք մեր երկնաւոր
 Փրկչին ճնունդը, մահը ու փառքը ճանուցուած է,
 շատ կամ քիչ յայտնի խօսքերով : Արեւիային ու
 Ասայիին մարդարէութիւնները կարգալով կը տես-
 նենք որ աս մարդարէները մեր Փրկչին վրայով այն-
 պէս խօսած են, իբրև թէ անոր ժամանակը երկրի
 վրայ ապրեր էին : Անոր երկրորդ դարուստն ալ կան-
 խաձայնուած է շատ տեղ, մանաւանդ Ազգկիւիւն և
 'Վանիւիւն մարդարէութեանցը մէջ :

«Չեր քրիստոնէական առատասարտութեանը խոր-
 կած սնտուկը՝ ընդհանուր ուրախութիւն մը պատ-
 ճառեց աս կողմերը դանուող մեր ամէն բարեկամնե-
 բուն սրտին մէջ, որոնք աս հաճելի լուրը առնելուն
 պէս՝ քոյս ժողովուեցան, որ մեր Փրկչին Կտակա-
 րանը ստանալու բարեբաստիկ յաջողութիւնը ձեռք
 բերեն, և հինգ օր չգնաց՝ սնտուկը պարպուեցաւ :
 Մատթէոսի 'Աւետարանին օրինակները' լման 'Սր
 Կտակարանը ծախու առնելու բաւական կարողու-
 թիւն չունեցողներուն տուի : Ամէնը մէկէն անանկ
 շուտով բաժնուեցաւ, որ շատ մարդիկ ալ ունայ-
 նաձեռն ետ դարձան, ոմանք ալ աս երկրորդ սըն-
 տուկին գալը դեռ չիմացան : Միտքս աս է որ ինձի
 համար պահած Աստուածաշունչս և ուրիշ ինչ գիրք
 որ ունիմ՝ դրացի բարեկամներուս փոխ տամ, որպէս
 զի իմ ունեցած գրքերս որչափ որ կարելի է օգտա-
 կար ըլլան :

«Աւ որովհետև յոյս ունիմ որ ինձի աս պատիւը
 ու քրիստոնէական մարդասիրութիւնը պիտի ընէք,
 այսինքն նամակս ընդունելիդ պիտի ճանուցանէք,
 կ'աղաչեմ ուրեմն ինձի իմացընէք թէ ինչ միջոցով
 կրնամ ձեզի հասցընել աս վախճան փրանքը՝, ու-

*Մէկ ֆրանսէր գրեթէ չորս ու կէս դրոսով լափ է :

որոնք տասնուհինգ օրինակ 'Նոր Ատակարանին գինն են : Եւ ինչպէս որ Յիսուս Քրիստոսով մեր եղբայրները ու քոյրերը՝ որոնք Իր շնորհացը արդիւններով բոլորովին ձրի և առանց արժանաւորութեան կը սպասեն Իր երկրորդ գալստեանը , իմ միջոցովս քու խրկած ճշմարիտ քրիստոնէական ողջունիդ վրայով ուրախ եղան և անկէ շինութիւն ստացան . կը խնդրեն որ իրենց երախտադիտութիւնը ձեզի յայտնեմ , և ձեզ աղաչեմ որ անոնց ողջոյնը զիջանիք ընդունելու : Ես ալ անոնց հետ միաբանելով կ'աղաչեմ զձեզ և ձեր յարգի բարեկամը — և քու բոլոր բարեկամներդ , որպէս զի լուսոյ Հօրը աղօթք ըրած ատեննիդ մեզ ալ յիշէք , որ մեզի շնորհք տայ աս մտքիս վրայ հաստատ կենալու , և պարգևէ մեզի ան ողորմութիւնը որ երկնային Երուսաղէմին ընդհանուր ժողովին հետ միանանք : Եմէն : Են երջանիկ օրուան սպասելով , կը խնդրեմ որ ձեր ամենախոնարհ աղախինը ու Յիսուս Քրիստոսով բարեկամը ձանչնաք զիս :

«Որբւարի —» :

Յայտնի կ'երևի թէ աս սրտառուչ նամակը ընդունիլը վաճառականին մտքին մէջ մեծապէս տպաւորութիւն ըրած պիտի ըլլար , ինչպէս նաև Փարիզի մէջ եղող իր բարեսէր բարեկամներուն մտացը մէջ : Վաճառականը իմացուց որբւարիին թէ մեծապէս ուրախացեր է գեղացւոց Եստուծոյ խօսքը ստանալու փափազին վրայով գրածները կարդալով , և աս ալ ըսաւ թէ ապօպրած է որ տը Սասիի 'Նոր Ատակարանը տպագրել տուողը ուրիշ յիսուն օրինակ ալ խրկէ . և նոյն ատենը խոստացաւ որ եթէ պէտք մը ունենան՝ նորէն իրենց խնդիրքը կատարէ : Ասկէ աս յոյսն ալ տուաւ անոր՝ որ քանի մը ամսու միջոցին՝ գործի մը պատճառաւ նորէն այն ինչ քաղաքը պիտի երթայ , ու ան ատենը եթէ վերին նախախնամութիւնը կամենայ , կարող պիտի ըլլայ պատեհութիւն գտնել , ու երկրորդ այցելութեան մը

երջանկութիւնը վայելել անոր բնակարանին մէջ :
Քիչ մը հաքը աս նամակիս որբեարին ասանկ պա-
տասխան մը տուաւ :

«Տէր իմ և եղբայր սիրելի՝ մեր Յիսուս Քրիս-
տոսով — Մեր երկնաւոր Փրկչին շնորհքը ու ձրի ո-
ղորմութիւնը ըլլայ մի միայն յոյսերնիս հոս մեր պան-
դխտութեանը մէջ : Աղաչեմ ձեզ և ձեր սիրելի
բարեկամները որ մեզի համար աղօթք ընէք , որպէս
զի Սուրբ Իրոց մէջ խոստացուած երկնաւոր Աը-
խիթարիչը հաճի մեր սրտերուն այցելութիւն ընելու ,
ու զանոնք իր սիրովը վառելու . քանզի առանց աս
Ետուածառար Լուսոյն օգնականութեանը՝ թէ և
միտքերնիս պահէնք Հին և Նոր Ատակարանը , մե-
զի օգուտ մը պիտի չընէ , այլ մանաւանդ մեր Գե-
րագոյն Գատաւորին առջևը դատապարտուելու պի-
տի առաջնորդէ մեզ :

«Ալ հիմա կ'իմացնեմ ձեզի ան սնտուկին ձեռքս
հասնիլը , որն որ քրիստոնէական սիրով բարեհաճեր
էիք մեզի խրկիլու , որուն մէջ մեր օրինակ Փրկչին
յիսուն օրինակ Նոր Ատակարանը կար , որն որ մին-
չև անցեալ ամուսն 25ին մեզի ճհասաւ՝ աս պատ-
ճառով որ այս անուն քաղաքը շտեմարանի մը մէջ
ժամանակ մը մնացիր էր առանց իմ դիտութեանս :
Բայց երբոր հոն ըլլալը իմացայ , աղջիկներուս մէկը
խրկեցի՝ որ երթայ փնտռէ , քանզի անատներ այն-
պէս հիւանդ պառկած էի՝ որ ալ կարծեցի թէ աս
արքորանաց երկրէն հեռանալու վրայ եմ : Սակայն
անցեալ օրերը նայեցայ որ աղէկ վիճակի մէջ եմ ,
սկսայ մտածել թէ իմ պանդխտութիւնս ժամանակ
մըն ալ պիտի տևէ , և թէ ձեզ նորէն տեսնելու հա-
ճութիւնը և միսիթարութիւնը պիտի վայելեմ , ու
մեր յաւիտենական խորտոյութեանը վերաբերեալ բա-
ներու վրայով պիտի խոստովանուիմ ձեզի հետ : Ուստի
ասանկ զգացումներով կը խնդրեմ ձեր աղօթքին օգ-
նականութիւնը , որպէս զի մեզ և ուրիշ մեզաւոր-

2
ՄՐՇԱԿՅԱՆ
ԿՅՈՒՆԻ ԱՆՉԱՍ

ներու համար մեր երկնաւոր Փրկչին յօժար կամօք թափած պատուական արիւնը զօրացնէ զիս ան նոյն կէտին՝ երբօր աս արտասուաց ձորէն մեկնելու ըլլամ. քանզի իմ տարիքս կ'իմացընէ ինձի թէ ան ժամանակը շատ հեռու է : Հաւատան ինձ , եղբայր իմ 'ի Քրիստոս , որ բնաւ քեզ անյիշատակ չեմ թողուր իմ տկար աղօթիցս մէջ . վասն զի չեմ կրնար մոռնալ ան օրը՝ որ քրիստոնէական բարեկամութենէ շարժեալ իմ տունս մտար , և մեզի հաղորդեցիր ան ճշմարիտ և հոգևոր կերակուրը՝ որ ներկայ կեանքերնուս ու յաւիտենականութեան ալ կը վերաբերի , ու մէկտեղ մեր երկնաւոր Փրկչին երկրորդ գալստեանը վըրայ և ժողովուրդին խոստացեալ գերեզարձութեանը վըրայ խօսակցեցանք :

«Ահա մերութեամբ կը սպասեմ ան երջանիկ բուպէին որ դարձեալ ձեզ տեսնելու պատիւ ու բերկութիւն պիտի ունենամ , և միանգամայն կը խընդրեմ որ ճանչնաք զիս ձեր ամենախոնարհ և գորովալից բարեկամը ու աղախինը Յիսուս Քրիստոսով
«Որբւարի ———» :

Վերոյիշեալ նամակէն քիչ մը ետքը ընդունուած նամակով մը վաճառականը լուր առեր էր՝ որ Աստուածաշունչները ու Վոր Ատակարանները հոն հասնչուն պէս երկօրօր մէջ ամէնն ալ ծախուեր հատեր են , և աս Սուրբ Գիրքերէն ստանալու փափաք ունեցող շատ մարդիկ ալ դեռ իրենց փափաքէն զուրկ մնացեր են . որչափ որ Աստուածաշունչը տարածուեր է , այնչափ ալ ուղղները շատցեր են : Վաճառականը միտքը դրաւ որ անոնց պիտոյքը լեցընելու զանցառութիւն չընէ . քանի որ ձեռքէն կու գար անոնց օգնելու . և այն ինչ քաղաքը երթալու ու լեռնաբնակ գեղացիներուն երկրորդ այցելութիւն մըն ալ ընելու որոշած օրը մօտեցած ըլլալով , հարիւր հատ Վոր Ատակարան և հարիւր հատ ութածալ դիրքով Աստուածաշունչ դրաւ սնտուկի մը մէջ . և իրմէն

առաջ՝ բեռ կրող սայլով մը Վինն խրկեց, որ իր հոն
հասնելուն առնէ. և քիչ մը ետքը Փարիզէն ճամ-
բայ ելաւ :

Ես ճամբորդութեան մէջ մէկ քանի հետաքրքրա-
կան դիպուածներ պատահեցան, որոնք այնչափ յայտ-
նի կը ցուցնէին Աստուծոյ ձեռքը, որ կարգացողին
հաճելի պիտի դայ անոնք լսելը : Ա՛յ՛ ա՛յ առականը Վինն
հասնելուն՝ հասարակաց կառքէն ՚ի զատ ուրիշ միջոց
մը չգտնելով իր միտքը դրած տեղը երթալու, ըս-
տիպուեցաւ աս կառքը մտնելու : Աստուածաշունչ
ու՛ր որ Ատակարան լեցուն սնտուկը այնչափ մեծ էր,
որ ուրիշ յարմար միջոցով մը չէր կրնար տարուիլ
բայց միայն կառքին ետեւի կողմը եղած բեռներուն
յատկացեալ տեղը դրուելով. և այնչափ ծանր ու
մեծ էր սնտուկը, որ շատ դժուարութեամբ և քա-
նի մը մարդու օգնութեամբը հազիւ թէ անմնաս կեր-
պով մը իր տեղը դրուեցաւ : Առջի բերանը ճամ-
բորդները հակառակեցան ու չուզեցին որ իրենց հեծ-
նելու կառքին ետեւի կողմը անանկ բեռ մը դրուի,
որ չըլլայ թէ ձախորդ դիպուած մը պատահի, կամ
ճամբուն մէջ իրենց արդելք մը ըլլայ : Ա՛յ՛ երջապէս
վաճառականը շատ յորդորանքներ ըրաւ, և ամէն
մէկ ճամբորդին կրօնական տեարակներ ընծայեց, և
կառավարին ալ աղաչեց որ ծանր քալիցքնէ՛ անասուն-
ները. ասոր վրայ ճամբորդները համոզուեցան ա-
ռաջ երթալու իրենց ճամբուն մէջ : Ետնք անանկ
տեղի մը քովէ կ'անցնէին՝ ուր որ միայն Հոռոյն-
կան Գալիոյի կը գտնուէին, և աս նոյն տեղն էր որ
առջի տարին վաճառականը մէկ քանի Աստուածա-
շունչ ու տեարակներ տարածեր էր, ու ետքը ի-
մացեր էր որ՝ քահանաները արդիւր էին զանոնք
կարդալը, և չէ՛ թէ միայն գրքերը ձեռքերնուն ա-
ռեր էին, հապա անոնց շատերը կամ թէ բոլորն ալ
կրակի տուեր էին : Ա՛յ՛ ա՛յ առականը յարմար դատեց
որ աս անգամ ան տեղուանքը գրքերը չտարածէ :

Սակայն Եստուածային նախախնամութեան դիտաւորութիւնը ուրիշ էր • ուստի բաները անանկ ճամբու մը դրաւ որ՝ առանց մարդկային միջոցի մը Սուրբ Գիրքը ան ժողովուրդին մէջը տարածուի : Արքայ վաճառականը իր միտքը դրած տեղը այսինքն լեռներուն ստորոտը հասաւ ու կառքէն իջաւ , տեսաւ որ սնտուկին բերանը բացուեր էր , և շատ Եստուածաշունչ ու՛ր Կտակարան ճամբան ինկեր էր : Եստոր վրայ շատ չանցած՝ ճամբորդ մարդիկներ եկան , ոմանք սայլերով , և ոմանք ձիերով , ոմանք ձեռքերնին Եստուածաշունչ մը բռնած և ոմանք՝ Սոր Կրտակարան մը , և իմացուցին վաճառականին թէ անկէ ութը տասը մշոն ասդին բնակող գեղացիները իրենց պակասութիւնը լիցուցին աս կառքին միջոցով • քանզի երբոր բլուրէ մը կ'իջնէին և կամ ապառաժուաւ խորտուբորտ գետնի վրայէ կ'անցնէին գլորքերը դուրս թափեր էին :

Աւ քանի որ դեռ աս դիպուածիս վրայով կը խօսէին , շատ ուրիշ մարդիկներ ալ եկան , ամէն մէկը իր Եստուածաշունչը ու՛ր Կտակարանը բերելով , և յօժար սրտիւ զանոնք վաճառականին կը մատուցանէին որ ետ առնէ • բայց անիկայ զուարթութեամբ ինդրեց որ զանոնք բնուենին , մտածելով որ ան գրքքերը անոնց գործածութեանը համար սահմանուած է վերին նախախնամական տնօրէնութեամբ , որ աներեւոյթ ձեռքով մը բոլոր մարդկային դիպուածները կը կարգադրէ : Վեղացիները առանց գիտնալու ան գրքին մէջ պարունակուածները որ Եստուած աս միջոցով իրենց տուեր էր , անթիւ շնորհակալութեան խօսքեր կը մատուցանէին վաճառականին՝ իր առատաձեռնութեանը համար , և ծիծաղերես իրենց ճամբան երթալու վրայ էին , անատներ վաճառականը արձակից զանոնք բռնելով • « Ա՛ղջայրներս , աս բանիս մէջ մասնաւորապէս իմանձս երջանիկ կը սեպեմ որ աս Գիրքը ձեր ձեռքը տալու միջոց մը եղայ , որ

կը պարունակէ յաւիտենական կենաց վերաբերեալ
 քրուածքները, և ձեզի յայանի կը ցուցնէ Աստու-
 ծոյ Քառնուկը որ աշխարհի մեղքը կը վերցնէ :
 Թէ որ հաւատարմութեամբ կարդար անիկայ, և ա-
 նոր փառաւորեալ ու անգին ճշմարտութիւնները ծծէք,
 և անոր պատուիրանքներուն հազանգիք, անիկայ ալ
 ձեզ երջանիկ պիտի ընէ, Թէ աս կենսաբիւ մէջ, և
 Թէ յաւիտենականութեան անվախճան դարերուն մէջ”:

Աստուկը բանալուն՝ վաճառականը նայեցաւ որ
 քառասունութիւնը Աստուածաշունչ ու “Սոր Ատակա-
 րան աս կերպով տարածուած էին : Իր ճամբու ըն-
 կերներէն ոմանք կը խորհէին Թէ սնտուկը դիտմամբ
 բաց թողուեր էր, բայց վաճառականը հաւտացուց
 անոնց Թէ սովորական զգուշութեամբ ապահով ըլ-
 լալու չափ գոցուած էր, և Թէ բնաւ Գրքերուն իյնալը
 չէր դիտեր, մինչև որ իրենց իջած տեղը չհասան :

Աւստի սնտուկը շուտով որբեարիին հասցնելու
 համար հարկաւոր եղած միջոցը ՚ի գործ դնելով, և
 անոր իմացնելով իր դիտաւորութիւնը Թէ այս ինչ
 գիւղաքաղաքը պիտի անցնի, ուր որ միտք ունի քա-
 նի մը որ մնալու, ան միջոցին կը յուսայ որ երկրորդ
 այցելութիւն մըն ալ ընէ անոր ու անոր բարեկամ-
 ներուն, և այսպէս նորէն նոյն կառքը հեծաւ, ու
 նոյն գիշերը վերը բսուած տեղը հասաւ : Հետեւեալ
 օրը չէ միւս օրը բերկրալի զարմացում մը զգաց, տես-
 նելով որ առտուանց կանուխ իր բնակած պանդոկին
 բոլորաիքը յիտուն վաթսուն հոգի շարուեր էին, ու
 կը փնտռէին ան “Վարոնը որ մէկ կամ երկու օր ա-
 ռաջ իրենց քաղաքացիներուն մէկ մասին անանկ Գեր+
 մը ընծայեր էր, որ “Մեր Տէր և Փրկիչ Յիսուս
 Քրիստոսին ծննդեանը, կենացը, չարչարանացը, մահ-
 ուանը, յարութեանը, և համարձմանը ճշմարիտ
 պատմութիւնը կը պարունակէ եղեր” : Անոնցմէ ո-
 մանք ալ բուն Գրքին անունը կու տային այսինքն
 Տեառն մերոյ Յիսուսի “Սոր Ատակարանը : Ասոնց

ամենն ալ կը փափագէին մէյմէկ օրինակ ծախու առնել : Ա՛յ՛ աճառականը անոնց ասայցելու թեանը ստոյգ պատճառը իմանալով՝ պատուհանէն երեցաւ ու անոնց յայաննց իրցաւակցու թիւնը ըսելով թէ ան օգտակար Վրբէն ալ ուրիշ մը չունի իր քովը . և հասկըցուց անոնց որ ելճէ Եստուծոյ կամեցողութեամբը ինքը Փարիզ դառնայ , շուտով հարիւր օրինակ պիտի խրկէ իր ան տեղի թղթակցին , որպէս զի ամէնքնին ալ մէյմէկ օրինակ առնին : Ես ըսածը իր Փարիզ հասնելէն անմիջապէս ետքը կատարեց : Եւ վաճառականը որչափ ժամանակ որ Փարիզ մնաց՝ ուրախ սրտիւ կը տեսնէր որ ան գեղին բնակիչներէն ու մանք՝ որ իրենց գործարաններուն համար գործ ուղելու կու գային , նաև Սուրբ Գիրք բերելու հահամար ալ յանձնարարութիւններ կ'ունենային : Եսանկ չնչին երեցած գիպուածի մը միջոցով այսինքն կառքին մէջ սնտուկին բացուելովը ան թանձրամիտ Պապական ժողովրդոց մէջ մտած Եստուածաշունչներուն ու Կոր Կտակարաններուն թիւը , հաւանականաբար բնաւ պիտի չստուգուի մինչև վերջին օրը . ո՛չ ալ պիտի իմացուի թէ որչափ նպաստամատոյց եղաւ խափուած մարդոց հոգիներուն դարձի գալուն և փրկուելուն :

Հետեւեալ օրը այս մեր վաճառականը լիւններուն վրայի գեղէն լուր առաւ որ՝ անոնք մեծ փափագով կը ցանկան եղիւր իմանալ թէ որ օրը կամ որ ժամուն իր ամենացանկալի այցելութիւնը վայելելու պիտի արժանանան : Ընոնց պատասխաննց թէ հետեւեալ առտուն կէս օրէն մէկ ժամ առաջ որբեարիին տունը պիտի գտնուի : Ուստի իր բարեկամներէն մէկուն տուած կ'նոքը հեծաւ , ու լիւանը ստորոտը հասնելուն , Վրիստոսի աս ճշմարիտ հետեւողներէն տասուերկու կամ տասնուհինգ հոգի ուրախութեան նշաններով իր գալուստը ողջունելու համար զինքը գիմաւորեցին : Ա՛յ՛ աճառականը անմիջապէս կառքէն

վար իջաւ : ու անոնք որբեարիին տունը տարին քը-
րիստոնէական անկեղծ սիրոյն բոլոր յարգութիւննե-
րովը : ոմանք անոր թեքեան բռնելով : և ոմանք ա-
նոր վերարկուին քղանցքներէն : ոմանք անոր առջևէն
և ոմանք ետևէն երթալով : Բայց երբոր տունը հա-
սաւ : արդեօք ինչ մեծ զարմանքով բռնուեցաւ՝
տեսնելով հոն վաթսուն կամ ութսուն հոգիէ բաղ-
կացած ժողով մը : որոնք միաձայն կը խնդրէին որ
իրենց քարոզ մը տայ : Աճառականը իմացուց ա-
նոնց՝ թէ ինքը անարժան աշխարհական մըն է : և ա-
սանկ մէկ սուրբ պաշտօն մը կատարելու բոլորովին
կարողութիւն չունէր : և մանաւանդ անանկ ժամա-
նակ մը՝ որ իր միտքը իր աշխարհային գործքերովը
զբաղած էր . և կը զգար իր ներսի դին՝ թէ ուրիշ
ներուն խրատ տալու տեղը ինքը մանաւանդ պէտք
ունէր խրատի : Սակայն սենեակին մէկ յարմար կող-
մը՝ անոր համար աթոռ մը դրուած էր : ու անոր
առջևը պզտիկ սեղան մը վրան կանանչ ծածկոցով :
անոր վրայ դրուած էր ան Մտուածաշունչը՝ որ ին-
քը քանի մը ամիս առաջ որբեարի կնկանը ընծայ
խրկեր էր : Արջապէս տեսնելով որ առանց քիչ
շատ մէկ բան մը խօսելու պիտի չկրնայ աս ժողով-
քին թախանձանքէն ազատ մնալ : Մտուած մէ օգ-
նութիւն ու օրհնութիւն խնդրելով՝ իրեն համար գրո-
ւած աթոռը նստաւ . և միտքը դբաւ որ անոնց
օգուտին համար ջանայ Մտուածաշունչէն անանկ
խրատ ու մխիթարութիւններ քաղել՝ որչափ որ ին-
քը կարող է անոնց հաղորդելու :

Աս անակէկալ տեսարանիս մէջ ամէն բան գեղեցիկ
ու շքեղ կ'երևնային Աճառականին աչքերուն : Իր
մտած սենեակը չեցուն էր գեղջուկներով : ամէնքն ալ
վայելուչ կերպով նստարաններու վրայ բազմած :
Տանը ետևի կողմէն մ. ճ գուռ մը բացուած էր :
ու սկից կ'երևնար լիռանը զառ'իվայրը որուն վրայ
տունը կանգնուած էր : ու անոր բոլորախոր ունկրն-

գիրներ կեցեր էին : Ես միջոցիս՝ հեռուէն կը տեսնուէր որ ոչխարները ու արջառնները հանդարտութեամբ կը ճարակէին , ծառերը գեղեցիկ տերեւներով ծածկուած՝ քաղցրաշունչ հովին փչելէն կ'երեքային , կը թուէր թէ բոլոր բնութիւնը միաբաններ էր ան հողեոր զգացումներուն հետ՝ որոնք այսչափ յայտնի կերպով կ'երեւնային աս գեղջկականաց ժողովքին վրայ :

Վաճառականը աղօթք ընելէն ետքը , Գործք Եւսաքելոցին չորրորդ գլխուն մէկ մասը կարդաց : Ենոնց ուշադրութիւնը յատկապէս երկոտասաներորդ համարին մէջի աս խօսքին դարձուց . « Ուրիշ անունն ճշ չկայ երկինքին պակշ Տարդոսա որոտասթ , որ անով կարող ըլլանք փրկուելու » : Աը ջանար յայտնի ցուցնել անոնց՝ թէ մեզքը որչափ գէշ բան է , և Եստուծոյ օրէնքը անարգելը ինչ սոսկալի հետեւանքներ ունի , և թէ որչափ տկար են ան նաբուած բաները՝ որոնք մարդոց տգիտութեամբը , ամբարտաւանութեամբը և իրենց բարի գործքերու սպաստանելովը ան « մի միայն անունին » Յիսուս Քրիստոսին անըը դրուած են : Եսկէ ետե խօսեցաւ խաչին վըրայ մատուցուած ան մեծ զոհին հարկաւոր ըլլալուն վրայ , Եստուծոյ սիրոյն վրայ՝ որ իր Արդին աշխարհք խրկեց , ան երեւելի փրկութեանը կատարեալ և ամենաբաւական ըլլալուն վրայ , և մեզաւորաց պարտաւորութեանը վրայ՝ թէ պարտին զանիկայ ընդունիլ որ յաւիտենական կեանք ունենան : « Միայն Քրիստոսի միջոցով՝ ըսաւ վաճառականը , կրնաք յոյս ունենալ մեզաց թողութեան և փրկութեան . ուրեմն պէտք է որ խաչը առնէք ու Քրիստոսին հեռեւէք . ձեր մեղքերէն հրաժարիք , ու երթաք Քրիստոսին քովը ապաստանիք , ձեր անձին արդարութիւնը ուրանաք , ու միայն Քրիստոսին հաւատաք , և ուրիշ ամէն տերերը թողուք ու միայն Քրիստոսին նազանդիք . քանզի թէ որ մէկ երկրաւոր

Թագաւորի մը դէմ յանցաւոր ըլլայիք, ու միայն անոր որդւոյն միջոցովը կարենայիք իրեն մօտենալ, միթէ անոր Ժառանգորդն պիտի երթայիք աղաչէիք, և չէ թէ իր որդւոյն : Աւրեմն ձեր հոգիներուն կարևոր գործքերուն մէջ Արդիէն զատ ուրիշ մը պիտի երթաք : Եւեղի՞ կ'ընտրէք Կոյս Սարխամին, կամ ուրիշ սիրելի Ժառանգի մը դիմել, քան թէ անձնանուէր ըլլալ Ենոր՝ որ ինքն է «Ճանապարհ և ճրմարտութիւն և կեանք» և քանի որ Եստուած ինքը կ'իմացընէ մեզի՝ թէ «Ուրիշ անոն մը զկայ երկնքին ասկը Ժարդուս արդուս, որ անով կարող ըլլանք փրկուելու» :

Տասնուհինգ կամ քսան բոսի միջոցի չափ ասանկ բաներ խօսելով, երբոր իր ունկնդիրներուն մեծ մասը արցունքներ կը թափէին, յանկարծ որբւարին վազեց եկաւ վաճառականին քովը, ու մեծ խռովութեամբ «Պարոն՝ պարոն՝ ըսաւ : «Վնչ կայ՝ տիկին» ըսաւ վաճառականը : «Հեռուանց կը տեսնեմ որ» ըսաւ կինը, «մօտ գեղի մը կառավարիչը խել մը կը նիկներու հետ ընկերացած արտորնօք դէպ ՚ի իմ տունըս կու գայ : Ես մարդիկը մեր մեծ հալածիչներն են. հիմա պէտք չէ՞ որ մեր եղբայրներուն ուքոյրներուն պզտիկ ժողովըներս կանչեմ, ու դռները ամուր մը դոցենք» : «Վչ տիկին» ըսաւ վաճառականը, «ընդհակառակն թէ որ կարելի է՝ դռները ալ աւելի բաց. հաւատա՛ մեր Փրկիչ Եստուծոյն, և աս ըսնըս ինձի՛ յանձնէ, դուն մի՛ հոգար» :

Ես միջոցիս երկեւզ մը տիրեց բոլոր ժողովքին վըրայ, և հետեւաբար շփոթութիւն մը ինկաւ մէջերնին մէկ քանիններուն ոտքի վրայ կըլելովը : Իսկ վաճառականը աղաչեց զանոնք որ հանդարտ կենան, և իրենց տեղը մնան. և ըսաւ ալ թէ՛ աս իրենց ժողովուրդն նպատակը Եստուծոյ ընդունելի և հաճոյսական բան մըն է, որուն համար հրեշտակները կ'ուրախանան, և Սատանան անկէ կը դողայ. և թէ

պէտք չէ որ մարդոց ձեռքէ վախնան : Ես միջոցիս
կառավարիչը երեցաւ դրանք սեմին վրայ , իրեն ըն-
կերացածներն ալ հետը ունենալով : «Անքա հրա-
մեցէք՝ տէր , ու նստէք» , ըսաւ վաճառականը , ցու-
ցնելով անոր՝ սեղանին մօտ դրուած աթոռ մը :
«Ո՛չ տէր» ըսաւ անիկայ , «ես աւելի կ'ընտրեմ հոս
կայնիլ» : «Բայց ես աւելի կ'ընտրեմ» , ըսաւ վա-
ճառականը , «որ ներս գաք ձեր մարդիկներով մէկ-
տեղ , ու նստիք» : Տեսնելով որ վաճառականը շատ
կը բռնադատէ , հաճեցան , ու ամէնքն ալ ուն-
կընդիրներուն մօտ նստան :

Են ատենը վաճառականը անոնց ուրիշ բան մը
խօսելու , Եստուածաշունչը իր առջին բաց ունենա-
լով անոնց ուշադրութիւնը Քրիստոսի լեռան վը-
րայ ըրած քարոզութեանը աս խօսքերուն ուղղեց .
«Երանի՛ անոնց՝ որ հալածուած են արդարո՞ւմ-լեւան
համար , ինչո՞ւ որ երկնից լափա՞րո՞ւմ-լեւանը անոնցն
է : Երանի՛ է Յէզե՛ երբ որ կը նախապէս Յէզ և կը
հալածեն , ու սո՞ր արեղը ամէն կերպ գէշ խօստեր
կը խօսին վրանիդ՝ ինձի համար : Յիշացէ՛ք և ու-
րանի եղէ՛ք , ինչո՞ւ որ Յէր վարձէր շատ է երկնէն .
քանի որ աս կերպով հալածեցին Յէզէ՛ աստ ինչ
մարգարէնէրը» : Մատթ . Է . 10—12 :

Եսկէ ետքը վաճառականը անոնց առջևը դրաւ
Եռաբեկոց և առջի Քրիստոսնից քաշած չարչարանք-
ները Քրիստոս Յիսուսին վրայ եղած ճշմարտու-
թեանը համար , և անոնց յարատեւութիւնը ու հաս-
տատութիւնը որով ամէն պարագաներու մէջ չարչա-
րանքներու համբերեցին իրենց Փրկչին վրայ ունեցած
սիրոյն համար . և ըսաւ ալ թէ՛ անոնք իրաւունք
ունէին այնպէս ընելու , քանզի Քրիստոսին աս խօս-
քերուն վրայ վստահացած էին , թէ՛ «Իրենց վարձ-
քը մեծ պիտի ըլլայ երկինքի մէջ» : Եսկէ ետքը ըս-
կաւ ցուցնել թէ՛ որչափ դատապարտութեան տակ
կ'իյնան և ինչ մեծ մեղք կը գործեն անոնք՝ որ թէ՛

անգիտութեամբ և թէ դիտմամբ Քրիստոսի հետեւողները կը հաբաճեն, որոնց ըրածը ուրիշ բան չէ, բայց միայն «Իրենց անձին վրայ բարկութիւն կը դիզեն՝ վերջին բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանին յայտնուելու օրուանը համար» : Ընօրը՝ որ յաւիտենականութեան ահաւոր արդիւնքները պիտի տեսնեն՝ հեռու չէ, և թէ ան ատենը ամէն մարդ պիտի դատուի իր կեանքին մէջ ըրած գործքերուն համեմատ :

Արբոր վաճառականը տասը կամ տասուերկու բուպէի չափ ասանկ բաներ խօսեցաւ՝ մասնաւորապէս իր նոր ունկնդիրներուն մտացը մէջ ճշմարտութիւնը արդիւնաւոր ընելու համար, մէյմըն ալ տեսաւ որ կառավարիչը իր հանդերձին թեովը աչքերը կը սրբբեր, ու նոյն բուպէին ոտք ելլելով՝ ըսաւ .

Տէր իմ, կը խոստովանիմ որ հոս իմ առջևս ներկայ եղող ժողովուրդին շատերուն դէմ առաջուց ՚ի վեր թշնամութիւն ունեի, և իմ իշխանութեանս տակը եղած տեղուանքը ձեռքէս եկածին չափ կը ջանայի ցրուել անոնց ժողովքը ապօրինաւոր սեպելով, և զանոնք դարձընել մայր եկեղեցւոյն ծոցը՝ ուսկից որ անցեալ տարիները հետ զհետէ հեռացան : Բայց թէ որ ատ քու ամէն ըսածներդ ճշմարիտ են, և Աստուծոյն Սուբ Գրքին համաձայն են, և թէ ատ ձեռքի գիրքդ բնագրին անսխալ թարգմանութիւնն է, կ'աղաչեմ որ զանկիայ ինձի ծախես, որ ես կարգամ և ուրիշներու ալ կարգալ տամ՝ որոնք կարող են աւելի աղէկ քննութիւն ընել անոր մէջի պարունակուած խօսքերուն վրայ . և թէ որ անոր մէջ գտնեմ որ քու ստորագրած խոստմունքներդ և սպառնալիքներդ շիտակ են, հաստատ գիտցիր որ աս անմեղ ժողովուրդը չհալածելէս ՚ի զատ, ասկէ ետև անոնց բարեկամը պիտի ըլլամ :

Վաճառականը աս լսելուն՝ անմիջապէս խնդրեց որբեարիէն որ քանի մը Աստուածաշունչ բերէ իր

խրկած անտուկին մէջէն : Ուստի մէկ հատ մը կա-
ռավարիչին ընծայեց և մէյմէկ հատ ալ անոր Պա-
պական ընկերներուն : Աճառականը ընծան կառա-
վարիչին ձեռքը տուած ատենը՝ ըսաւ որ ինքը յօժար
սրտիւ կ'ընծայէ զանիկայ անոր ու իր մարդոցը , ան
յուսալով որ անկէ ետե չէ թէ միայն աս բարի ժո-
ղովուրդին բարեկամները պիտի ըլլան , բայց ան ալ
որ աւելի հարկաւոր է՝ Յիսուս Քրիստոսի բարեկամ-
ները պիտի ըլլան , որ է «Սի Թայ» բարեխօս Աստու-
ծոյ և մարդոց մէջ" : Ընոնք այսպէս իրենց ճամ-
բան կլան ու նոյն ժամանակը վաճառականը անոնց
խնայուց թէ իր սրտին փափաքը և առ Աստուած
մատուցած աղօթքը աս բանիս համար է՝ որ անոնք
Սուրբ Վերքը զգաստութեամբ՝ խոնարհութեամբ և
աղօթքով կարդան , որպէս զի իրենց միտքը լուսա-
ւորուի , և իրենց սիրտը Աստուածային շնորհաց ճո-
խութեամբը լցուի . որով և կարենան անկէ ետե
պաշտպանել ան իրաւացի դատը , որն որ մինչև հի-
մա կորսընցունել կը ջանային . ու նաև աս աշխարհի
մէջ իրենց Փրկիչ Աստուծոյն ծառայութիւնը կա-
տարելով՝ կարողանան ան երջանիկ մարդոց թուոյն
մէջ գտնուիլ , «Որոնք Քառնուկին կենաց գրքին մէ-
ջը գրուած են" : Տունէն դուրս ելած ատենին՝ ա-
մէնքն ալ կու լային . կ'երևնար թէ անոնց զրուց-
ուած ճշմարտութիւնները խորին տպաւորութիւն ը-
րած էր իրենց սրտին վրայ :

Աճառականը աս խօսքը վերջացրնելուն՝ խընդ-
րեց որ մնացած Աստուածաշունչներէն և՛ Սոր Ար-
տակարաններէն մէկքանի հատ բերին ու իր առջևը
սեղանին վրայ դնեն : Աս գիրքերը ձրիապէս բաշխեց
ամէն ներկայ գտնուողներուն , որոնք առաջուց ըս-
տացած չէին , և ստակով ծախու առնելու ալ կա-
րողութիւն չունէին : Աս միջոցիս՝ անոնք որ առա-
ջուց Սուրբ Վերք առած էին , առաջ գալով՝ իրենց
կրօնատաղիտութիւնը կը յայտնէին սեղանին վրայ

գնելով իրենց զանազան պարգևները, ամէն մէկերնին երկու ֆրանքէն մինչև տասը ֆրանք կու տային, նանկ որ քիչ ատենի մէջ սեղանը ծածկուելու մօտեցաւ : Աւճառականը ըսաւ անոնց թէ ինքը չըհաճիր աս կերպով ստակ առնել, հապա աս իրենց ընծան որբեարիին ձեռքը յանձնեն՝ պարգև տուողներուն անուններովը մէկտեղ, որպէս զի օրինաւոր կերպով Աստուածաշունչի ընկերութեան հաշիւը անցնի : Աս բանիս քիչ մը դժուարութեամբ հաճութիւն տուին, երբոր որբեարին իր գլոցէն 170 ֆրանք լեցուն քսակ մը բերաւ՝ ըսելով վաճառականին թէ պէտք է որ աս ստակը ընդունի, քանզի իր խրկած Աստուածաշունչներուն ու՛ր որ Ատակարաններուն գինն է, որոնք իր հրամանին համեմատ ծախսեր էր : Աստասխան տուաւ վաճառականը ու ըսաւ • յիրաւի ես քեզի ապսպրեցի որ աս գրքերը ծախու առնելու կարողութիւն ունեցողներուն՝ ըստակով ծախես, որպէս զի ստոյգ գիտնամ թէ արդեօք աս մօտ տեղուանքը Սուրբ Գրքին արժէքը ճանչցող մարդիկներ կը գտնուին, որ անոր համար յօժար կամօք ստակ վճարեն • բայց հիմա որ աս բանը կատարուեցաւ, ես արտօնութիւն ունիմ, իմ անձնական հաճութեամբս աս 170 ֆրանքը որբեարիին ձեռքը տալու, որպէս զի հաւասարապէս բաժնուի իրեք ողորմելի ընտանիքներու, որոնց համար լսեցի թէ մօտերս իրենց էրիկներնէն ու հայրերնէն զրկուեր են, որոնք անխահանքի փոսի մը փլատակներու ներքե մնալով մեռեր են :

Գեղացիները աս յօժարակամ առատասրտութիւնը տեսնելով՝ ամէնը մէկէն վաճառականին բոլորտիքը գիզուեցան, ու իրենց աչքերէն արտասուեաց վտակներ վազըրնելով՝ անհամար շնորհակալութիւններ ու օրհնութիւններ կը մատուցանէին, անանկ որ ասանկ սրտաշարժ տեսարան մը վաճառականը ընաւ տեսած չէր :

Երբոր անոնք աս իրենց քրիստոնէական սիրոյն նշանները կը յայտնէին , վաճառականը իր ճամբորդութեան պատրաստութիւնը տեսնելու ստիպուած ըլլալով , ինդրեց Աստուծով որ երկնային ամենաճոխ շնորհքը անոնց վրայ հանդէսընէ , և անոնց՝ սիրով մնաք բարեաւ ըսաւ :

Բոլոր ժողովքը անոր հետ գացին մինչև կառքին քովը . հոն հասնելուն պէս՝ վաճառականը նորէն խօսեցաւ անոնց ըսելով . « Իմ սիրելի բարեկամներս , թէ որ ձեզով մէկը դեռ ինքզինքը Աստուծոյ յանձնած չէ , և կործանման վիճակի մէջ կը գտնուի , կ'աղաչեմ ձեզ , ձեր աչքերուն քուն՝ ու ձեր արտաւանունքներուն նիրհում մի տաք՝ , մինչև որ Փրկչին չգիտէք : Եւ դուք որ Տէրոջը քաղցրութեան համբառած էք , Աստուծոյն մօտ կեցէ՛ք , ուրախ սրտիւ ձեր Փրկչին խաչը կրեցէ՛ք , Տէրը ճանչնալու ու անոր կամքը ընելու հաւէ՛ կողք . և իր շնորհքը ձեր սրտերուն մէջ թագաւորելով , ալ աւելի պիտի յաղթէք » : Աս ըսելէն՝ ու զանոնք խաչեալ Փրկչին միջոցով բոլոր շնորհաց Աստուծոյն յանձնելէն կտքը , երբոր անոնք ջերմ բարեմաղթութիւններ ու օրհնութիւններ կ'ընէին , ինքք ճամբայ ելաւ , մէյմըն ալ զանոնք իրենց հօրը թագաւորութեանը մէջ տեսնելու յուսով . ուր որ հառաչանքները ու հրաժարական ողջոյնները անձանօթ ձայներ են , և ուր որ Աստուած ամէն աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ :

Վաճառականը Փարիզ դառնալէն կտքը՝ ուրախ սրտիւ լուր առաւ որբւարիէն որ անոր քովը թողուցած ամէն Աստուածաշունչները ծախուած էին , և թէ զանազան կողմերէն շատ մարդիկ ալ գեղը կու գային ու շատ կը փափագին Աստուածաշունչ ստանալու , բայց անկարելի էր անոնց փափաքը լեցընելու : Այն ատենները աս գեղջկականաց երջանկութեանը համար մարդոց մէջ բարի կամեցողութիւն մը տարածուեցաւ Փարիզէն և մինչև անդամ Գաղ-


ղիայի սահմաններէն դուրս տեղուանքը : Ես տետրակին առջի մասին պատմութիւնը Ենգղիոյ մէջ շատ տեղ տարածուեցաւ : Ենգղիոյ ներսի կողմերու բնակիչներէն քանի մը հոգի քսան Լիրա Աթէրլին խրկեցին վաճառականին , որ անով Եստուածաշունչ ծախու առնուի , ու որբեարիին ձեռքովը ձրիապէս գեղացւոց բաժնուի : Եւ Աւէյլի նահանգէն մէկ ընտանիք մը ապա պատմութիւնը կարդալով , Փարիզի մէջ վաճառականին հետ տեսութիւն ըրին , և անկէ անցնելով լեռներուն վրայի գեղը գացին , և հոն իրեք շաբաթի չափ մնալէն ետքը՝ երբ որ Փարիզ դարձան , հաստատ կերպով վաճառականին վկայութիւն տուին , թէ ան իրեք շաբաթը իրենց կենացը ամէն ժամանակէն աւելի հաճելի եղեր էր :

Վաճառականը ան քսան Լիրա Աթէրլինով յիսուն Եստուածաշունչ և յիսուն Կոր Կտակարան ու խել մը ընտիր գիրքեր ու տետրակներ ծախու առնելով խրկեց որբեարիին : Ես ամէն Եստուածաշունչները , Կոր Կտակարանները ու տետրակները ուրիշ օրուան մէջ տարածուելուն վրայով որբեարին շուտով իմացուց , թէ վաճառականին և թէ Ենգղիոյ մէջ մարդասիրութիւն ընողներուն իր գրած նամակներովը , խիստ սիրալիր կերպով յայտնելով ըլլայ իր երախտագիտութիւնը , և ըլլայ ան ամենունն ալ՝ որոնց մատուցուեր էր կենաց խօսքը : Որբեարին քանի մը մասնաւոր լուրեր ալ տուաւ , այսինքն թէ Սուրբ Գիրքը մեծ եռանդով կը կարդացուի եղեր , և շատ Պապական ընտանիքներու մէջ տարածուեր է , և թէ անոնցմէ ոմանք Յիսուս Քրիստոսի ճշմարտութիւնը բոլոր սրտով ընդուներ են ու դարձի եկեր են : Ես ալ իմացուց թէ շատ մարդիկներ և ընտանիքներ գեռ Սուրբ Գիրքէ զուրկ էին , իսկ ինքք իրեն ու իր բոլորաիքը եղողներուն համար Եստուծոյ շնորհակալութիւններ մատուց , որ իր սքանչելի սիրովը

իր որդւոցը սիրտը գրգեց Մտուածաշունչ տարածելու և ուրիշ բարեգործութիւններու ձեռնտու ըլլալու : և իրենց հարստութեամբը՝ կարօտեալներուն Մեհտարանին դիտութիւնը մատակարարելու :

Աճառականը դեռ Փարիզէն չմեկնած՝ որբւարիին վերջին նամակը ընդունեց : որուն հետ խրկեր էր երկու հարիւր Փրանք : և աս ստակը՝ ժամանակ ժամանակ իրենց խրկուած Մտուածաշունչներուն ու՛ր որ Ատակարաններուն համար՝ որբւարին ու անոր որդիքը իբրև պարգև մը ընծայեր էին :

Աճառականը անոր պատասխանեց թէ : ասիկայ՝ ուրիշ կողմանէ քսան հազար Փրանք վաստրկելէն աւելի՝ ուրախութիւն պատճառեր էր իրեն : որովհետեւ իրենց Մտուածոյ խօսքին յարելուն ապացոյց մըն էր : Աւստի իրենց ընծայած ստակին բոլոր գումարը Մտուածաշունչի պառկոցուց : և Մեկերութենէն երկու հարիւր յիսուն՝ Սոր Ատակարան առնելով : և յիսուն հատ ալ իրմէ աւելցրնելով : իբրև իր մեկնելէն առաջ իր վերջի ընծան . նաև վեց հարիւր տետրակներ և ուրիշ զանազան հոգևոր գիրքեր ալ մեկտեղ որբւարիին խրկեց . և անոր Փարիզի մէջ եղող պատուաւոր բարեկամ մը ցուցուց : որ եթէ նորէն բանի մը պէտք ունենայ : անոր ապաստի և ապահով ըլլայ թէ իր խնդիրքները անյապաղ պիտի կատարուին . նաև յորդորեց զանիկայ որ հաւատքի մէջ հաստատ մնայ : ու իր աչքը ամէն ատեն Փրոկչին վրայ դնէ . վերջապէս Մտուածոյ խնամոցը յանձնելով զանիկայ ան ջերմեռանդ յուսով՝ որ Տերոջը անքննելի առատարուղև շնորհացը միջոցով : անկէ ետեւ իրեն ու իր հալածեալ ընկերներուն հետ ան աշխարհին մէջ պիտի տեսնուի : ուր որ «Չարերը մարդ տանջելէն կը դադարին : ու հոն ուժէ ինկանները հանգստութիւնը կը գտնեն»





Handwritten mark or signature in the top left corner.

0

Handwritten text in the upper right quadrant, possibly including the word "بسم" (Bismillah).

Handwritten text in the center of the page, appearing to be a title or a short passage.

Handwritten mark or signature in the lower left quadrant.

Handwritten mark or signature in the lower middle section.

Handwritten mark or signature in the lower right section.

2563

«Ազգային գրադարան»



NL0029467



2489